

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



ԴՈՐԱ ՍԱՔԱՅԱՆ, Չմյուտնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի Օրագիրը, Նախաբան՝ Թեսաս Հոֆմանի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, «Նահապետ» հրատարակչություն, Երևան, 2005, 218 էջ:

Մինչ արդի թրքական իշխանությունները համառորեն պնդում են անցյալ դարասկզբի դեպքերի բնութագրության համար պատմաբանների համատեղ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության մասին, ցեղասպանագիտությունը հարստանում է նորանոր լուրջ հրատարակություններով, մանավանդ նորահայտ պատմական վավերագրերով: Պրոֆ. Դորա Սաքայանի աշխատասիրությամբ այս օրերին բազմաթիվ լեզուներով (այդ թվում՝ հունարեն և թուրքերեն) լույս տեսավ նրա մայրական պապի՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի (1876-1952) օրագիրը՝ «Չմյուտնիական արկածներս 1922-ին»: Այս վավերագիրը վերականգնում է հունական մշակույթի վաղեմի կենտրոններից մեկի՝ Չմյուտնիայի՝ քրիստոնյաներից գտնան ճշմարիտ պատկերը: Բազմիցս նկատված է՝ թրքական տարեգրությունը զազանությունների հերթագայություն է. կարծես «երախտագետ» հետնորդները մախնիների ոճիները մոռացության տալու համար ժամանակ առ ժամանակ նորերն են ձեռնարկել՝ ավելի կամ նվազ ծավալներով: Մարդ արարածի սաղրած աղետները կրկնվում են ոչ միայն իբրև ստոր կրքերի ու քնազոհի արտահայտություն, այլև անպատժելիության պատճառով: Ուստի ոճրագործից ոչ պակաս հանցավոր է «քաղաքակիրթ» մարդկությունը, որ եթե չի հովանավորում, նաև չի բռնում արյունոտ ձեռքը: Այդպես պատմության մեջ մտան երիտթուրքերը, որ զարմանք ու զարհուրանք հարուցեցին իրենց զործերով: «Մենք, - ասում էր Լորդ Ջեյմս Բրայսը, - երևակայել չէինք կարող,

որ Արդու-Համիդի աննկարագրելի դաժանությունները» հնարավոր է գերազանցել, այնինչ «երիտթուրքերի կառավարությունը մոռացրեց Արդու-Համիդին իսկ»¹:

Նկատի ունենալով թրքական կառավարությունների դարավոր հետևողական աշխատանքը Փոքր Ասիան յուրացնելու և բնիկներին բնաջնջելու, տեղահանելու կամ ձուլելու հրեշավոր ծրագրի իրականացման ուղղությամբ՝ Դ. Սաքայանը գրում է. «Երախտապարտ եմ պապիկիս այսպիսի կարևոր փաստաթուղթ թողած լինելու համար, ականատեսի մի վկայություն, որը հաստատում է, որ հայ ժողովրդի Եղեռնը 1915 թվականի ողբերգությամբ իր վերջը չի գտել, և որ ինչպես հզոր երկրաշարժից հետո տեղի են ունենում լրացուցիչ ցնցումներ, XX դարի առաջին ցեղասպանությանը հաջորդել են ուրիշ՝ ծավալով ավելի փոքր, բայց ոչ նվազ կործանարար աղետներ, որոնցից մեկը 1922-ի Չմյուտնիայի աղետն էր» (էջ 131):

Կ. Խաչերյանն իր առաջին գրառումը կատարել է 1922 թ. օգոստոսի 28-ին՝ երկուշաբթի, իսկ վերջինը՝ սեպտեմբերի 25-ին՝ դարձյալ երկուշաբթի, երբ նրա ընտանիքը մազապուրծ ասի է ելնում Միտիլիում: Ընդամենը մեկ ամսից պակաս ժամանակ՝ հազեցած ծանրագույն հուզումներով ու սարսափով, և Կ. Խաչերյանը օրը օրին արձանագրել է տեսածն ու զգացածը, որով լիակատար պատկերացում է տալիս իրերի դրություն մասին:

Այս առումով Ամերիկայի հեղինակատական ուսմանց առաջադիմական միավորման նախագահ Թեդ Վիտասը Կ. Խա-

¹ «Հովիտ», Թիֆլիս, 1917, ք. 9:

չերյանի գիրքը զուգադրում է մեկ ուրիշ հայի՝ Մարջոռի Հուսեփյանի՝ նույն դեպքերին մվիրված երկին («Ձմյուռնիա 1922. Մի քաղաքի կործանումը», Նյու-Յորք, 1971, անգլերեն): «Ով ուզում է իսկապես հասկանալ գրում է Թ. Վիտասը, թե որոնք են Ձմյուռնիայի աղետի դրդապատճառները, թե ինչպիսին էր դաշնակիցների վարքագիծը այդ օրերին և շատ ուրիշ մինչև օրս հունական մատույնում չպարզաբանված հարցեր, շատ հանձնարարելի է, որ գոնե այս երկու հայ հեղինակների գրքերը կարդա» (էջ 209):

Խոսքով առերևույթ իրար դրժող քրքական կառավարությունները հաջորդում են միմյանց, բայց նրանց գործելակերպը նույնն է. առաջադիմական կարգախոսներ հռչակելով՝ նրանք շարունակում են հետևողականորեն բնաջնջել կամ երկրից դուրս մղել քրիստոնյաներին: 1920-ական թվականների սկզբին ևս մոլեզմում էին քրքական գազանությունները: Հունական գործը կազմալուծված է, անկարող է պաշտպանելու Կարահիսարի, Ուշաքի, Ալաշեհիքի քրիստոնյա բնակչությանը: Մննդամթերքը սպառնալի արագությանը պակասում է: Կարահիսարից մինչև Մաղմիսա հեյլենական բանակից լքված բոլոր քաղաքները, գյուղերը հրի են մատնված (տե՛ս էջ 60):

Տարածաշրջանի թուրք և քրիստոնյա բնակիչները փոխադարձ պաշտպանության երդում են տալիս: Քրիստոնյաները «հավատում են այս կեղծ ու պատիք խոսքերին ու փորք-ինչ հանգստանում» (էջ 65-66): «Ալ-Հիսարի քրիստոնյաները, - ավելի ուշ պիտի արժանագրե՞ր Կ. Խաչերյանը, չարաչար սխալվեցին, երբ թուրքերի հետ իրար պաշտպանելու մասին համաձայնություն կնքեցին... Թուրքերը իրենց մաշկը փրկելու համար Ղուրանի վրա երդում արեցին և սպասեցին քեմալական զինվորների ժամանմանը: Հենց որ իրենց համար վտանգը անցավ, թուրք զինվորների օժանդակությանը ամեն քաղաքառատություն գործեցին քրիստոնյա ամենը բնակչության մկատմամբ, որը իրենց երդումին հավատալու միասնությունն էր ունեցել» (էջ 118-119):

Հետզհետե իրավիճակը սրվում է, կացությունը դառնում օրհասական, բայց, չգիտես ինչու, զմյուռնացի քրիստոնյաները

հավատ են ընծայում իտալացի հյուպատոսի հայտարարությանը՝ «Փաղաքում ոչ մի դեպք չի պատահելու», անհավանական են համարում նոր կոտորածը: Ավելին, արևմտյան դիվանագետները հավաստիացնում են, թե հայկական թաղը՝ Հայնոցը, մյուս թաղերից շատ ավելի պաշտպանված է լինելու: Բայց անտղդելի եվրոպացիների հավաստիացումները կամ գիտակցված խաբեություն էին, կամ, որ քիչ է հավանական, խաբված էին այդպես հայտարարողներն իրենք: Թերևս տեղա՞լ էին քրքական նպատակներին և խոստացել էին չխանգարե՞լ:

Մերձակա բնակավայրերից քրիստոնյաներ են լցվում Ձմյուռնիա, և քաղաքը մատնվում է խուճապի: Փողոցները դառնում են անանցանելի: Երբ քրքական սպառնալիքներն իրական կերպարանք առան, բոլոր օտար զինվորականները հրահանգ ստացան պաշտպանելու միայն իրենց հյուպատոսությունները, իրենց դրպրոցներն ու եկեղեցիները, հիվանդանոցներն ու առևտրական հաստատությունները (տե՛ս էջ 69): Իսկ «թուրքերը վաղուց ի վեր որոշել էին Իզմիրի քրիստոնեական թաղերը ոչնչացնել՝ հատուկ ծրագրի համաձայն» (էջ 81): Քաղաքի քրքական ու հրեական խանութների վրա ապահովության համար մախապես գրված էր՝ «խլամ» կամ «մուսլի» (էջ 70):

Մեպտեմբերի 9-ին, մոռանալով Ղուրանի վրա տված երդումը, թուրք խուժանը միանում է զինվորներին և սկսում կողոպուտը (տե՛ս էջ 67), այտուայնտեղ «Նշմարվում են արյան հետքեր» (էջ 68): «Հայնոցն ու շրջակա թաղերը դարձել են անմարդաբնակ, մինչդեռ ֆրանկների թաղի շուրջը գտնվող հույն թաղերում երևում են հասուկենտ անցողիներ... Հասկացա, որ թուրքը միշտ նույն ջարդարար ու կողոպտիչ տարրն է, լինի Ալբանիայում, Մակեդոնիայում, թե Թրակիայում, լինի Արաբիայում, Սիրիայում, թե Հայաստանում: Թուրքը նույն արյունաբերու գազանն է՝ անկախ այն բանից, թե սքողված է իթքիաբական, թե իթիլաֆական, համիդական, թե քեմալական դիմակի տակ: Թուրքը նույն գիշատիչ բունենին է՝ թե՛ Փոքր Ասիայի ներքին գավառների խորքում, թե՛ Պոլսի և Իզմիրի մանա

երոպակամացած քաղաքներում», - գրում է Կ. Խաչերյանը (էջ 69):

Սեպտեմբերի 12-ին սկսվում են ձերբակալությունները. «Հալածանքը ուղղված է մասնավորապես հայերի դեմ այն պատճառով, թե իբր նրանք դիմադրություն են ցույց տվել ս. Ստեփանոս եկեղեցում ու Առաջնորդարանում» (էջ 73): Ամսի 13-ին՝ կեսօրից հետո, Հայոց թաղը պարտուրվում է ծխով: Կրակը, որ սկսվել է միաժամանակ մի քանի տեղերում, մայրամուտին հասնում է հունաց թաղերը, իսկ կեսգիշերին՝ մավահանգիստ: «Շատ հրդեհներ են տեսել, - ասում է հեղինակը, - բայց Իզմիրի ներկա հրդեհը ամնկարագրելի է ու անբացատրելի» (էջ 75): Կրակը, հրագեմն ու թուրքի մտրակը երեք կողմից սեղմել են քրիստոնյա զանգվածին: Եթե հույսի նշույլ մնացել է՝ ծովն է (տե՛ս էջ 77): Բայց քաղաքին տիրելուց հետո թուրքերը բռնագրավել են առագաստանավերն ու մակույկները, կոտրել սրանց թիակները, որպեսզի քրիստոնյաները հնար չունենան փախչելու:

Շուկներ են տարածվում, թե թուրք խուժանն ու հրդեհի կազմակերպիչները հրշեջ խմբերին արգելել են մարել կրակը, թե հրշեջ ջրհանի սնդուկներում ջրի փոխարեն բենզոլն են լցրել՝ հրդեհը առավել սաստկացնելու նպատակով: Կասկած չկա, որ թուրքերը նախապես այլևայլ տեղեր յուրոտ քուրջեր, բենզոլնով լեցուն թիթեղներ և ուրիշ դուրավառ նյութեր են տեղավորել (տե՛ս էջ 81): Այդպիսով հրդեհը միանգամից տարածվել է ամեն կողմ՝ մոխրակույտի վերածելով Հռոմիական այս գեղեցիկ քաղաքի ամենից բարգավաճ մասը՝ քրիստոնեական թաղը: «Իրոք, դժոխսամիտ թուրքերը հասան իրենց գազանային նպատակին. գյավուր Իզմիրը դարձավ թուրք Իզմիր» (էջ 82): Շուտով ավեր տներում հայտնվում են կողոպուտի հետամուտ թուրք կանայք ու պատանիներ:

Իսկ օտարերկրացիները պարզ հանդիսատես են, վկայում է Կ. Խաչերյանը. «Նրանք մերժում են ապաստան տալ նույնիսկ լուրջով կամ մակույկով նրանց մոտեցողներին, որպեսզի պահպանած լինեն իրենց քաղաքական չեզոքությունը: Քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու քրիստոնեությունը սին բառեր են դարձել նրանց համար» (էջ 78):

Սեպտեմբերի 15-ին հնչում է թուրքերի հերթական խաբեությունը. մունետիկն ազդարարում է՝ ում տները չեն այրվել, կարող են վերադառնալ, անտուն մնացածները կարող են դիմել կառավարությանը, որ իրենց հատկացվի բնակարան: Երկու օր անց հրապարակվում է զինվորական հրամանը՝ մինչև սեպտեմբերի վերջը կանայք, ինչպես 18-ից կրտսեր և 45-ից բարձր տարիքի բոլոր քրիստոնյաները մեկնած լինեն Չմյուռնիայից, իսկ 18-45 տարեկանները հայտարարվում են ռազմագերի (տե՛ս էջ 96-97): Սեպտեմբերի 15-ին գաղտնիքի մի սուտ՝ պաշտոնական հաղորդագրություն են տարածում թրքական թերթերը, ըստ որի թալանի, վայրագությունների, լայնածավալ հրդեհի հեղինակները հայ հեղափոխականներն են:

Տեսանելիորեն ներկայացնելով իրադրությունը և հետադարձ հայացք նետելով՝ Կ. Խաչերյանը արձանագրում է. «Իզմիրից մեկնելուց առաջ կողոպուտեցինք ոչ միայն թուրք բարբարոսների, այլ վերջում նաև ամերիկյան Ռեյլիֆ-ի կողմից» (էջ 113), իսկ զմյուռնական դժոխային չորս օրերի տանջանքները, ասում է նա, չորս դարի տևողություն ունեին:

Գրքի ընկալմանը մեծապես օգնում է գերմանացի համեմատաբան-ցեղասպանագետ Թեսսա Հոֆմանի «Աղետի նախապատմությունը և միջավայրը» առաջաբանը, որով պատասխան են ստանում նաև Թուրքիայի ներկա վարչակարգի խորամանկ խուսամավումներն ու «առարկությունները» մասնավորաբար Շեռնի գոհերի թվի և *ցեղասպանություն* եզրույթի կիրառման կապակցությամբ: Նա տեղեկացնում է, որ առաջին աշխարհամարտից առաջ Չմյուռնիան ուներ 400.000 բնակիչ: Քաղաքի վերնախավը կազմում էին լեհաստիները, հույները և հայերը, իսկ դա շարժում էր թուրքերի չարությունը: Հույները 150.000 էին, հայ, լեհաստի և հրեա համայնքները՝ 25.000-ական, իտալացիք, ֆրանսիացիք, ամերիկացիները, բրիտանացիք ընդամենը 25.000 էին, իսկ թուրքերը՝ 160.000:

«Թուրքիան թուրքերի համար» (ցեղասպանական ի՛նչ պերճախոս բանաձև) ծրագրի հետևողական իրագործումը ուղեկցվում էր ոչ միայն բնաջնջումով, այլև

աքսորով կամ ձուլումով: Գերմանիայի դեսպան Ռադոլֆիցի՝ 1916 թ. սեպտեմբերի 16-ի հաղորդմամբ «եթե որպես թուրքահայերի ընդհանուր թիվ ընդունենք 2,5 միլիոնը, ապա զոհվածների թիվը կհանգի 1.5 միլիոնի, իսկ վերապաղոններինը՝ մոտ 425.000-ի» (էջ 10):

Թ. Հոֆմանը բերում է ցեղասպանության համեմատական ուսումնասիրությունների հիմնադիր Ռ. Յ. Ռումմելի հաշվումները, որոնց համաձայն թուրքական տարբեր վարչակարգերը 1900-ից մինչև 1923 թ. սպանել են 3.500.000-ից մինչև 4.300.000 քրիստոնյա, այդ թվում՝ հայեր, հույներ, մետաղականներ և այլն, իսկ այլ հաշվումներով «հայկական և հունական ցեղասպանության զոհերի թիվը 2.449.000 է, որից 2.102.000 հայ: Նրանցից 1.487.000-ը սպանվել է երիտթուրքերի, իսկ 614.000-ը Մուստաֆա Բենալի «ազգայնականների» կողմից»: 1914-1922 թթ. հույն զոհերի թիվը մոտավորապես 1 միլիոն է: 1915-1918 թթ. եղել է 0.5 միլիոն արամեախոս զոհ, որից 100.000-ը՝ ասորի ուղղափառ:

Նույն այդ հաշվումներով, Չմյուտնիայի դեսպերին զոհվել է նվազագույնը 120.000 քրիստոնյա, այդ թվում՝ գրեթե ամբողջ հայ բնակչությունը (տե՛ս էջ 25): 1998 թ. Հունաստանի խորհրդարանը փոքրասիական աղետը որակել է իբրև *ցեղասպանություն*՝ ելնելով այդ երևույթի՝ ՄԱԿ-ի սահմանումից, և սեպտեմբերի 14-ը հայտարարել էր աղետի զոհերի հիշատակի օր (էջ 24):

Թ. Հոֆմանը նկատել է տալիս այն, ինչ երիտթուրքական պատերազմական վարչակարգը 1913-ից փորձարկել էր նախ Թրակիայի, ապա Հոնիայի և վերջապես Պոնտոսի հույների նկատմամբ. «1915-ից սկսեց կիրառել ավելի խոշոր չափերով և ավելի մեծ թափով իր տիրապետության սահմաններում գտնվող ամբողջ հայկական բնակչության հանդեպ»: Ընդ որում, հույների համար հաշվի էր առնվում «նրանց չեզոք, գերմանացիներին ազգակից թագավորական տունը» (էջ 10):

Թուրքական կառավարությունները

քաղաքականության մեջ կիրառում էին եռակի ստանդարտ՝ մեկը Եւրոպայի, մեկը ներքին «սպառման», իսկ մյուսը մահմեդական աշխարհի համար: Դրա վառ օրինակներից է այն, որ, ասենք, պատերազմի հանցագործներին մի ձեռքով դատում էր, մյուսով փաղաքշում: Ինչպես հայտնի է, 1919-1920 թթ. ստեղծեցին հատուկ քրեական դատարաններ և շատ երիտթուրքերի (մեծ մասամբ հեռակա) դատասարտեցին: 1919 թ. հուլիսի 5-ին որպես պատերազմի հանցագործ, «կայսրության հայ բնակչության բնաջնջման» պատասխանատու Թալեաթը դատարարվեց մահվան: Այդ վճիռը փաստորեն ձևական նշանակություն ուներ, ցուցադրական էր, և երբ ի կատար ածվեց հայ վրիժառուի ձեռքով, կառավարական «Եմի գյուն» թերթը հռչակեց. «Մեր մեծ հայրենակիցը մահացավ իր երկրի համար... Թալեաթը քաղաքական տիտան էր: Թալեաթը հանճար էր... Թալեաթը մնալու է այն մեծագույն մարդը, որ Թուրքիան երբևէ ծնել է» (էջ 20): Ուշադրության արժանի է հատկապես վերջին նախադասության պնդումը:

«Թուրքիան թուրքերի համար» կարգախոսը, հասկանալի է, շոշափելու էր ոչ միայն երկրի քրիստոնյա բնակչության բնաջնջման խնդիրը, թեպետ ավելի մեղմ, բայց աչքաթող չէր արվում մահմեդական այլազգիների արտաքսման կամ ձուլման հեռանկարը: Այդպես 1916-ին ճապաղջուրից, Բալուից, Մուշից, Կարինից, Բաղեշից տեղահանվել է 300.000 քուրդ: Երիտթուրքերն ունեին նաև արաբների բնաջնջման ծրագիր: Թ. Հոֆմանը բերում է Յակոբ Կյունցլերի վկայությունը. «Մի ոստիկան ինձ հայտնեց, որ պատերազմը հաղթանակով ավարտելու դեպքում թրքերը իրենց հաշիվն էին մաքրելու արաբների հետ, և որ ինքը այժմվանից անհամբեր էր մասնակցելու նրանց կոտորածին»²:

Մի հանգամանք էլ, որ ցույց է տալիս ջարդարարների հեռատես զգուշությունը: Չմյուտնիայի Ռեշիդիե ոստիկանատունը հրաման է ստանում մահանգի ոստիկանապետից. «Գրավոր ցուցմանց համաձայն,

² Թ. Հոֆմանը (էջ 29) հղում է հետևյալ հրատարակությանը. Künzler, Jakob, *Im Lande des Blutes und der Tränen: Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918)*. Potsdam, 1921. Neuauflage hrsg. von Hans-Lukas Kieser, Zürich, 1999, էջ 100:

որ ստացել են ոստիկանական վարչությունից, Հայրենիքը ամեն սպայի և տղամարդու հրամայում է... կատարել իր պարտքը, այսինքն՝ ընդհանուր կոտորածի պարտքը: Ձինված ուժերի յուրաքանչյուր անդամից սպասվում է չորսից հինգ հույն կոտորել: Գրավոր հրամանով ոստիկանության վարչությունից վերը նշված հրամանը գրավոր ձևով փոխանցելու առաջադրանք են ստացել: Ունեն այս *հրամանը կատարելու ձևերի մասին լրացուցիչ ցուցումներ, մի բան, որ ես Ձեզ անձամբ եմ հաղորդելու*» (էջ 22): Ինչպես երևում է մեր ընդգծած տողերից, հրամանի հեղինակները «ամոթխածորեն» առավել քստման էլի թելադրանքները բանավոր էին հաղորդում, որպեսզի հնարավորին չափ քիչ լիներ պատասխանատվության բեռը: Բայց հրամանի ավելի «պարկեշտ» մասը, որ հնարավոր էր համարվում գրավոր հաղորդել՝ պակաս ամոթաբեր չէ և պակաս խոսումն չէ:

Գնահատելով Կ. Խաչերյանի օրագրությունը՝ Թ. Հռֆմանը վստահություն է հայտնում, որ այն իր արժանի տեղը կգտնի հույն-թուրքական հակամարտության, ինչ-

պես նաև Փոքր Ասիայում քրիստոնյա տարրի նկատմամբ «հալածանքների ու բնաջնջման պատմության համապատկերում» (էջ 1):

Ի վերջո, հիշենք, որ սույն արժեքավոր հրատարակությունը լիակատար դարձնելուն օգնել են ոչ միայն աշխատասիրող Դորա Սաքայանի «Դր. Խաչերյանի Համառոտ կենսագրությունը» և «Եզրափակիչ խոսքը» (էջ 125-132), ծանոթագրությունները (էջ 133-150), այլև «Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի ընդունելությունը. Հրատարակված ու չհրատարակված կարծիքներ» շատ կարևոր բաժինը (էջ 175-209), մատենագիտական ցանկը (էջ 211-218):

Բժիշկ Կարապետ Խաչերյանի սույն գիրքը նրանցից է, որ խոսում վավերականությամբ կարող են հիմնահարցերը շրջանցել փորձող թրքական իշխանություններին «ազատել» պատմաբանների համատեղ ուսումնասիրություններ կազմակերպելու անտեղի մտահոգությունից:

Ա. Գ. ՄԱԿՈՅԸ